ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բան. գիտ. թեկն.
anahit1881@inbox.ru

ԱԾԱԿԱՆ // ԳՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ՀԱՄԱՏԵՂՈՂ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Բանալի բառերի և արտահայտություններ. ածանցավոր բառեր, վերջածանց, բառակազմական արժեք, բառակազմական ձևույթ, սերող հիմք, ձևաբանական արժեք, գոյական, ածական, խոսքիմասային տարարժեքություն:

Ключевые слова и выражения: производные слова, суффикс, морфема, словообразовательное значение, основа слова, морфологическое значение, существительное, прилагательное, семантическое различие.

Key words and expressions: derivative words, suffix, morpheme, word-formation meaning, word basis, morphological meaning, noun, adjective, semantic difference.

Բառերի ձևաբանական իմաստները քննելիս նկատում ենք, որ որոշ բառեր լեզվի շարահյուսական մակարդակում համատեղում են մեկից ավելի խոսքիմասային արժեքներ:

Գրաբարում կան բառեր, որոնց ձևաբանական արժեքը երկփեղկված է տարբեր խոսքի մասերի միջև. դրանք հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումներով: Այդ բառերը կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր, իսկ քերականական երևույթը՝ խոսքիմասային տարարժեքություն[1]:

Լեզվի հինհայերենյան շրջանում առկա են ածանցավոր ածականների խմբեր, որոնք միաժամանակ դրսևորում են ածականի և գոյականի խոսքիմասային արժեքներ: Այն ածանցները, որոնցով կազմված են ածական // գոյական երկարժեք բառերը, հիմնականում հատուկ են

[1] Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 32-33: Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 39:
Գ. Ջահուկյանն այդ կարգի բառերը անվանում է երկակի և եռակի գործածություն ունեցող բառեր (երկգործառույթ և եռագործառույթ բառեր) (տե՛ս Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 526-527):

ածականներին, ուստի այդ կարգի բառերը ծագումնաբանորեն հանգում են ածական խոսքի մասին։

Ներկա հոդվածում ձևաիմաստային հայեցակետից քննության են առնվում գրաբարի ած.//գոյ. արժեքներ համատեղող ածանցավոր բառերը, որոնց խոսքիմասային տարարժեքությունը պայմանավորված է ինչպես ածանցի բառակազմական նշանակությամբ, այնպես էլ սերող հիմքի՝ նախատիպի բառակազմական գործոնով։

Խոսքիմասային տարարժեքություն արտահայտող ածանցավոր բառերի մեջ, ինչպես ցույց է տալիս բառերի տիպաբանական քննությունը, գերիշխում են վերջածանցավոր կազմությունները։

Գրաբարում որպես բառակազմական ձևույթներ կենսունակ են հետևյալ վերջածանցները՝ ***-ական, -աւոր, -եալ, -ող, -ացի(-եցի), -իչ, -ի, -ենի, -եղէն, -ու:***

Դիտարկենք վերոհիշյալ ածանցներով կազմությունների բառիմաստներն ու խոսքիմասային արժեքները՝ ելնելով դրանց շարահյուսական գործառույթներից։

-Ական ածանցով երկարժեք բառեր: ***-Ական*** ածանցը գոյականական նախատիպերից կազմում է ածականներ՝ արտահայտելով «նախատիպ գոյականին վերաբերող՝ հատուկ» ընդհանուր բառակազմական նշանակություն։ Նման կազմություններում որպես նախատիպեր հանդես են գալիս մարդկանց հատուկ և հասարակ անուններ, տեղանուններ, ազգերի անուններ և այլ հասարակ գոյականներ[2]։

Այս ածանցով երկարժեք բառերն ունեն հետևյալ իմաստները.

1) Ածանցավոր ածականների նախատիպը՝ սերող հիմքը, անձի հատուկ անուն է։ Այդ կազմությամբ ածականները արտահայտում են «նախատիպին վերաբերող՝ հատուկ» բառակազմական նշանակություն։ Խոսքիմասային փոխանցման ընթացքում ձեռք են բերել նաև «նախատիպ գոյականի անձի անվան հետ կապված գաղափարական ուղղություն, կրոնական հոսանքների կողմնակից, այդ ուսմունքին պատկանող, այն դավանող անձ» գոյականական նշանակություն, ինչպես՝ ***յուդայական, մահմետական, մարկիոնական, իսմայէլական*** և այլն։

Հմմտ. ***Մահմետական*** – ած.//գոյ. Մահմեդականություն դավանող. մուսուլման. հագարացի. արաբ. Նեստորիոս հաղորդ հրէից, եւ ***մահմետականաց*** հաւասար խորհրդակից (Նար. Երգ.)։

[2] Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 65։

2) Ածանցավոր ածականների սերող հիմքը հասարակ անուն է։ Նման կազմություններն արտահայտում են «նախատիպի հատկանիշն ունեցող կամ նրա անվան հետ առնչվող ուսմունքի կողմնակից՝ հետևորդ բառակազմական նշանակություն՝ ածականի և գոյականի խոսքիմասային արժեքով, ինչպես՝ ***աստուածական, առաքելական, կղերական, հեթանոսական*** և այլն։

Հմմտ. ***Հեթանոսական*** – ած. Հեթանոսներին՝ հեթանոսությանը հատուկ. Ի վերայ մեռելոց գործէին ոճիրս ըստ ***հեթանոսական*** սովորութեանն (Խոր., 280)։ գոյ. Հեթանոս. Ոչինչ յումեքէ առնուն ***զհեթանոսականացն*** (Գ. Յովհ. 7)։

3) «Տեղ, հիմնարկ, կազմակերպություն, որևէ վայր» և նման ընդհանուր իմաստ ունեցող հասարակ գոյական նախատիպերից ***-ական*** ածանցով կազմված ածականների զգալի մասը խոսքիմասային փոխանցումով նաև գոյական է՝ «նախատիպի ցույց տված տեղում ապրող, աշխատող, սովորող կամ որևէ կազմակերպության մեջ ինչ-որ բանով զբաղվող անձ» իմաստներով, ինչպես՝ ***աշխարհական, արօտական, բանտական, գաւառական, եկեղեցական, հիւսիսական*** և այլն։

Եկեղեցական – ած. Եկեղեցուն հատուկ՝ վերաբերող. ***Եկեղեցական*** ուխտիւ կառաչ բարձեալ լային ի տանն Աստուծոյ (Փարպ., 56)։ գոյ. Եկեղեցու պաշտոնյա, հոգևորական. ***Եկեղեցականքս*** քրիստոնէից՝ ընդ Ղեւտականացն (ՆՀԲ)։

4) ***-Ական*** ածանցով կազմությունների սերող հիմքը անձ, մարդկանց խումբ, խմբավորում նշանակությունն ունի. այդ ածականները համատեղում են նաև գոյականի արժեք՝ «նախատիպի անդամ՝ ներկայացուցիչ» իմաստներով, ինչպես՝ ***զինուարական, ժողովական, խորհրդական, պատերազմական*** և այլն։

Հմմտ. ***Զինուորական*** – ած. 1. Զինվորին՝ զինվորականությանը հատուկ. Ցանկալի եղեալ ***զինուորական*** արուեստին իւրոց զաւրականացն (Կոր., 36)։ 2. Զինվորագրված. Կոչէր զբազումս ի ***զինուորական*** քրիստոնէիցն (Եղ., 20)։ գոյ. Զինվոր, զինվորական դասին պատկանող անձ. Որպէս ***զզինուորական*** ոմն (ՆՀԲ)։

5) ***-Ական*** ածանցով կազմությունների նախատիպը բայարմատ է։ Այդ կազմությամբ որոշ ածականներ ունեն նաև գոյականի արժեք՝ գործողի անվան նշանակությամբ, ինչպես՝ ***աղօթական, լալական, լողական, վարձական, քերթողական*** և այլն։

Հմմտ. ***Աղօթական*** – ած. Աղոթքին հատուկ. աղոթքի. Պարգեւէ ***աղօթական*** բանիցն զվճիռ մահուն (Փիլ. Յովն.)։ գոյ. Աղոթք անող, աղոթող. ***Աղօթականքն*** անդադար լինէին յաղօթսն իւրեանց (Եղ., 68)։

-Աւոր ածանցով երկարժեք բառեր: ***-Աւոր*** ածանցով երկարժեք բառերը գործառապես մեծ հաճախականություն ունեն գրաբարում:

1) ***-Աւոր*** ածանցով կազմությունների նախատիպ են դառնում գործիքների, զենքերի անուններ: Ածականի արժեքով բաղադրություններն ունենում են «տվյալ գործիքը՝ զենքը ունեցող՝ կրող՝ գործածող» բառակազմական նշանակություն: Այդ բառերի մի մասը խոսքիմասային տեղաշարժերի ուղիով համատեղում է նաև գոյականի արժեք՝ «նախատիպի ցույց տված գործիքը, զենքը գործածող անձ» անձնանիշ իմաստով, ինչպես՝ ***աղեղնաւոր, գեղարդաւոր, մահակաւոր, նիզակաւոր, վահանաւոր, վաղակաւոր*** և այլն:

Հմմտ. ***Աղեղնաւոր*** – ած. Աղեղ ձգող՝ բանեցնող. Աճապարեալ հաւաքէ արս քաջս ***աղեղնաւորս*** (Խոր., 35): գոյ. Աղեղնաձիգ, նետաձիգ. Պատուէր տուք ամենայն ***աղեղնաւորաց*** (Երեմ. Ծ. 9):

2) ***-Աւոր*** ածանցով կազմությունների նախատիպ են դառնում հագուստի, զարդերի և այլ առարկաների անվանումներ: Այդ ածականներն արտահայտում են նաև առարկայական իմաստ ու գոյականի արժեք «նախատիպի ցույց տված առարկան, զարդը ունեցող՝ կրող անձ» բառական նշանակությամբ, ինչպես՝ ***ալեւոր, գանձաւոր, գիսաւոր, պսակաւոր, ջրաւոր*** և այլն:

Հմմտ. ***Ջրաւոր*** – ած. Ջուր ունեցող, ջրարբի, ոռոգվող. Եւ պտղաբերութիւն ***ջրաւորաց*** գաւառին դարձաւ յաղտաղտուկ (Խոր., 264): գոյ. Ջուր հանող՝ բերող՝ կրող անձ. Ջուր աղի և անոյշ զամանս ***ջրաւորացն*** լնուն (Ոսկ. Եբր.):

3) -Աւոր ածանցով կազմությունների նախատիպերը հասարակական տարբեր հավաքույթների, հոսանքների անվանումներ են: Իմաստային տեղաշարժերի հետևանքով դրանք նաև գոյականներ են՝ «նախատիպի ցույց տվածի մասնակից՝ կողմնակից՝ դրան հարող անձ» բառակազմական իմաստներով, ինչպես՝ ***աղանդաւոր, կրօնաւոր, մաքսաւոր, ուխտաւոր*** և այլն:

Հմմտ. ***Աղանդաւոր*** – ած. Մոլորահավատ, կախարդական. ***Աղանդաւոր*** դիւթութիւն (Մագ., Ա): գոյ. Այլադավան, հերետիկոս, կախարդ. Հայեցեալ մարգարէութեամբ ի տարապարտ հպարտութիւն ***աղանդաւորացն*** (Եզն., 284):

4) ***-Աւոր*** ածանցով որոշ կազմությունների նախատիպ են դառնում արհեստ, զբաղմունք, հասարակական դիրք նշանակող բառեր: Ածականի արժեքով այդ բառերը համատեղում են նաև գոյականի խոսքիմասային նշանակություն՝ «նախատիպի ցույց տվածով զբաղվող կամ հասարակության մեջ դիրք գրավող անձ» իմաստներով, ինչպես՝ ***առաջաւոր, բռնաւոր, զահաւոր*** և այլն:

Հմմտ. ***Առաջաւոր*** - ած. Գլխավոր, պատվավոր. Որ պատուական էր եւ ***առաջաւոր*** էր ի պաղատ նորա (Ճ. Ա.)։ գոյ. Առջևից գնացող մարդ, սուրհանդակ. ***Առաջաւոր*** զզալուստ թագաւորի նշանակէ (ՆՀԲ)։

5) ***-Աւոր*** ածանցով ածականական մի շարք կազմություններ ունեն բայական նախատիպեր, որոնք խոսքիմասային տեղաշարժերի հետևանքով համատեղում են նաև գոյականի արժեք՝ մի բան անողի՝ կատարողի (ենթակայական դերբայի) նշանակությամբ ու իմաստով, ինչպես՝ ***աղաչաւոր, անցաւոր, ասպատակաւոր, շնչաւոր, կալանաւոր*** և այլն։

Հմմտ. ***Ասպատակաւոր*** – ած. Ձիով արշավող. ձիարշավ ընթացող. Սկսաւ այնուհետեւ ի բազում տեղիս արձակել ***զասպատակաւորս*** (Եղ., 126)։ գոյ. Հեծյալ ավազակ. ***Ասպատակաւորք*** ասպատակեցին ի մեզ (Յովբ. Ա. 17)։

-Եալ ածանցով երկարժեք բառեր։ -Եալ ածանցը հանդես է գալիս այնպիսի կազմություններում, որոնք ունեն բայական նախատիպեր։ Այդ կազմություններն ունեն «նախատիպի ցույց տված վիճակն ունեցող անձ» հատկանշային և առարկայական իմաստներ, ինչպես՝ ***առաքեալ, դրոշեալ, կապեալ, կարօտեալ, հանդերձեալ, հաւատացեալ, հեծեալ, մեռեալ***[3] և այլն։

Հմմտ. ***Հեծեալ*** – ած. Ձի հեծած, ձիով. Առաքէ զօր բազում ***հեծելովք*** (Յհ. Կթ., 338)։ գոյ. Հեծելազորի զինվոր. Երիվարք ***հեծելոց*** սատակէին (Ագաթ., 97)։

-Ող ածանցով երկարժեք բառեր։ -Ող ածանցը, գրաբարում դրվելով բայահիմքի վրա, կազմում է ենթակայական (կամ ներկա) դերբայ[4]՝ գործողի անուն իմաստով։ Այդ մասնիկով բայաձևերը գործողի այնպիսի անուններ են, որոնք միաժամանակ բնութագրվում են որոշակի հատկանիշով, որ պայմանավորված է նախատիպ բայահիմքի բառիմաստով։

Նման կազմությունները, պայմանավորված բառիմաստով և (-ող) ածանցի բառակազմական նշանակությամբ, համատեղում են ածականի և գոյականի արժեքներ, ինչպես՝ ***ժողովող, խօսող, համարող, ուսուցող, պատմող, տեսանող*** և այլն։

---

[3] Գրաբարում **-եալ** քերականական մասնիկը բայական վերջավորություն է, և այս կարգի բառերը նաև հանդես են գալիս թե՛ բայի, թե՛ գոյականի խոսքիմասային արժեքով՝ բայական արժեքի երկատման ուղիով, այսինքն՝ գրաբարում կա **առաքեալ, հեծեալ**՝ որպես բայ և **առաքեալ, հեծեալ**՝ որպես գոյական։ Հմմտ. Զայն որ ի վերայ վիշապին **հեծեալ** էր այր, արծուոյ իմն արդարև սլացեալ թևովք տեսի յարձակեալ (Խոր., 76) – բայ։ Եւ Հիւրկանոս զտակառապետն ամենայն զօրօքն ոչ ընդունէր յԵրուսաղեմ, այլ միայն հինգ հարիւր **հեծելով** (Խոր., 133) – գոյական։

[4] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 160, Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018, էջ 192։ Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 181։

Հմմտ. ***Պատմող*** – ած.//գոյ. Պատմական անցքեր պատմող (անձ). ած. Սա աջակցեալ Վարբակայ Մարաց թագաւորի, որպէս եւ ասէ քաջն ***պատմող*** Մովսէս (Մ. Ան., 16)։ գոյ. Բազում են ժամանակիս այսորիկ ***պատմողք*** ի Պարսից (Խոր., 205)։

-Ացի(-եցի) ածանցով երկարժեք բառեր։ ***-Ացի(-եցի)*** ածանցով կազմությունները գոյականներ են՝ «տվյալ տեղի բնակիչ՝ ծնունդ» կամ «տվյալ ժողովրդի ներկայացուցիչ» բառակազմական նշանակությամբ։ Երբ ***-ացի(-եցի)*** ածանցը դրվում է տեղանունների վրա, տվյալ բաղադրությունը ձեռք է բերում «տվյալ տեղի բնակիչ» նշանակությունը՝ միաժամանակ արտահայտելով գոյականի և ածականի քերականական իմաստներ, ինչպես՝ ***ատտիկեցի, եբրայեցի, եթովպացի, ղեւտացի*** և այլն։

Հմմտ. ***Ատտիկեցի*** – ած. Ատտիկական, աթենական. ***Ատտիկեցի*** և ողբերգական առասպել պարարտութեամբն (Ագաթ., 263)։ գոյ. Ատտիկայի բնակիչ. աթենացի. ***Ատտիկեցիս*** ըստ վատթարութեան զանճառից իմոց ճառեցի (Նար., 164)։

-Իչ ածանցով երկարժեք բառեր։ ***-Իչ*** ածանցը կենսունակ է այնպիսի կազմություններում, որոնք ունեն բայական նախատիպեր։ Այս կազմություններն ունեն «նախատիպի ցույց տված գործողությունը կատարող» բառակազմական նշանակություն։ Նման կազմությունները, նախատիպի բառիմաստով և ***-իչ*** ածանցի բառակազմական արժեքով պայմանավորված, համատեղում են ածական // գոյական իմաստներ։

Նախատիպերը ցույց են տալիս՝

1) անձ, որը որպես մասնագիտություն կամ զբաղմունք կատարում է նախատիպի ցույց տված գործողությունը, ինչպես՝ ***աւետարանիչ, մատնիչ, մարգիչ, մխիթարիչ, պատմիչ, փրկիչ, քարոզիչ*** և այլն։

Հմմտ. ***Աւետարանիչ*** – ած. Ավետարան գրող. Մտեալ յապարանսն Փիլիպպոսի ***աւետարանչի*** (Գործ. ԻԱ. 8)։ գոյ. Աւետարան քարոզող հոգևորական. Բարձրացո՛ զբարբառ քո, ***աւետարանիչդ*** Երուսաղեմի (Ագաթ., 212)։

2) Առարկա, որ նախատեսված է նախատիպի ցույց տված գործողության կատարման համար, ինչպես՝ ***հարիչ, սրբիչ*** և այլն։

Սրբիչ – ած. Սրբող, մաքրող. Տուաւ ի ձեռս իմ դառնալ առ Աստուած կենդանի, որ է ***սրբիչ*** եւ քաւիչ երկրպագուաց (Ագաթ., 129)։ գոյ. Ածելի. ***Սրբիչ*** մի՛ ածիցէ զգլխով իւրով (Թուոց. Զ. 5)։

-Ի ածանցով երկարժեք բառեր։ ***-Ի*** ածանցը գրաբարի ապառնի դերբայի վերջավորությունն է, որ գործում է -ոց վերջավորությանը

զուգահեռ և դրվում է անորոշ դերբայի վրա[5]: Ապառնի դերբայի ի-ով վերջավորվող ձևերը վերածվել են կա՛մ գոյականի, կա՛մ ածականի, կա՛մ համատեղում են այդ երկու խոսքի մասերի իմաստները: Բաղադրություններն ստանում են «նախատիպ բայի արտահայտած գործողությունը կատարելու կարող» բառակազմական նշանակությունը, ինչպես՝ ***այրելի, զարշելի, ելանելի, ըմպելի, իմանալի, լսելի, ծնանելի, կրելի, ուտելի*** և այլն:

Հմմտ. ***Այրելի*** – ած. Այրող. Սուրբ սերմանիքն ցանեսցին ի ձեզ, եւ մի փուշն ***այրելի*** (Ագաթ., 265): գոյ. 1. Այրելու բան. Այրեցաւ մեհեանն, եւ ոչ զանուն անգամ ***այրելեացն*** կամեցան յայտնել (Ոսկ. Եփես.): 2. Հուր, կրակ. Այրեսցեն իւրեանց ***այրելիս*** եւթն ամի (Եզեկ. ԼԹ. 9):

-Ենի ածանցով երկարժեք բառեր: ***-Ենի*** ածանցով կազմությունների նախատիպեր դառնում են կենդանիների անունները: Այդ բաղադրություններն ունեն «նախատիպի մատնանշած կենդանու միսը կամ մորթը, կամ տվյալ կենդանուն բնորոշ» բառակազմական նշանակություն և համատեղում են ած.//գոյ. խոսքիմասային արժեքներ, ինչպես՝ ***այծենի, գայլենի, գառնենի*** և այլն:

Հմմտ. ***Այծենի*** - ած. Այծի մազից պատրաստված. Շրջեցան մորթովք ***այծենեօք*** (Եբր. ԺԱ. 37): գոյ. Այծի մազ. մազեղեն տարազ. Բերցեն նմա ***այծենի*** եւ վուշ (Վրք. Հց):

-Եղեն ածանցով երկարժեք բառեր: ***-Եղէն*** ածանցը գրաբարում կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված նյութից պատրաստված» բառակազմական նշանակությամբ: Նույն կազմությունները կարող են համատեղել գոյականի խոսքիմասային արժեք՝ ցույց տալով «նախատիպի նշած առարկան կամ նրա ցույց տված նյութից պատրաստված առարկան»: Այդ կարգի կազմություններից են՝ ***լուսեղէն, խոտեղէն, հոգեղէն, մազեղէն, մոմեղէն*** և այլն:

Հմմտ. ***Լուսեղէն*** – ած. 1. Լույսով շաղախված, լուսավոր. Երեւեցաւ խաչն ***լուսեղէն*** առ երանելեաւն Կիւրղիւ (Խոր., 270): 2. Անմարմին, հրեշտակային. Վերացան խառնեցան ի զօրս ***լուսեղէնս*** (Ագաթ., 386): գոյ. Հրեշտակների գունդ. Ձխաւարասիրացն փաղանգ՝ ***լուսեղինացն*** զինուց սաղրեցի (Նար., 164):

-Ու ածանցով երկարժեք բառեր: ***-Ու*** ածանցը բաղադրյալ նախատիպերից կազմում է ածականներ՝ «նախատիպի ցույց տված

[5] Տե՛ս Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 164, Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018, էջ 191: Լ. Մ. Խաչատրյան, Գ. Բ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004, էջ 181:

գործողությունը կատարողի՝ գործողի անվան» բառակազմական նշանակությամբ: Խոսքիմասային տեղաշարժերի հետևանքով այդ բաղադրիչները ձեռք են բերել նաև գոյականի խոսքիմասային արժեք: Այդ բառերի բաղադրյալ նախատիպերում՝ սերող հիմքերում, որպես վերջնաբաղադրիչ գործուն են մի քանի բայարմատներ՝ -***արկ, -երգ, -առ, -ած*** և այլն[6]:

1) ***Արկ*** բայարմատով կազմություններ՝ ***առակարկու, բանսարկու, ձայնարկու, խուճապարկու*** և այլն:

Հմմտ. ***Բանսարկու*** – ած. Խոսքերը խառնող, խառնակիչ, չարախոս. Ոչ է առն ***բանսարկուի*** արժան ի տան թագաւոր լինել (Եսթեր. Է. 4): գոյ. Սատանա. Սարսեալ ***բանսարկուն*** փախիցէ ի մէնջ (Փարպ., 62):

2) ***Երգ*** բայարմատով կազմություններ՝ ***նվագերգու, օրհներգու, տաղերգու, նոխազերգու, սաղմոսերգու*** և այլն:

Հմմտ. ***Նոխազերգու*** – ած.//գոյ. Ողբերգակ, ողբերգու, ողբերգություն գրող. ***Նոխազերգուացն*** ետ զարժանաւոր ընծայս (ՆՀԲ):

3) ***Առ*** բայարմատով կազմություններ՝ ***վրիժառու, կտակառու, պարգեւառու, պարտառու*** և այլն:

Հմմտ. ***Պարտառու*** – ած.//գոյ. Պարտք փոխ առնող, պարտապան (անձ). ած. Զինքն մնալ մեզ պարտական ախորժէ, զի նովաւ ե՛ւ ***պարտառու*** ե՛ւ պարտապան նոյն ինքն Աստուած լինիցի (ՆՀԲ): գոյ. Կարասցեն միանգամայն ***զպարտառուսն*** հաճել (Ագաթ., 4):

4) ***Ած*** բայարմատով կազմություններ՝ ***նվագաձու, տարփաձու, ակնաձու, աւելաձու, ձեռնաձու*** և այլն:

Հմմտ. ***Ձեռնաձու*** – ած. Հմայություններ անող, հմայող, կախարդող. Որ կանայս ***ձեռնաձուս*** ի տունս մուծանիցէ, արտաքոյ է քրիստոնէութեան (Մանդ. ԻԶ): գոյ. Կախարդ, վհուկ. Նահանջիչ ***ձեռնաձուաց***, խայտառակիչ կախարդաց, ըստգտիչ աղանիդից (Նար., 262):

Անշուշտ, ածական//գոյական արժեքներ համատեղող ածանցավոր բառերը չեն սահմանափակվում վերը նշված կազմություններով: Կան բառակազմական այլ ածանցներ ևս, որոնք կարող են արտահայտել առարկայի և հատկանիշի նշանակություններ, սակայն այդ ածանցների բառակազմական իմաստները չեն ընդհանրանում և բառաշարքեր չեն կազմում (ինչպես՝ -**ուն**՝ ասուն, խոսուն, սողուն, -**որդ**՝ առաջնորդ, հակառակորդ, մնացորդ, -**ակ**՝ բոլորակ, խառնակ, միջակ, -**եակ**՝ երկեակ, տասնեակ, -**ացու**՝ մարտացու և այլն):

[6] Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 166:

Քննարկված ածանցավոր կազմությունների մեջ գործառապես մեծ հաճախականություն ունեն **-ական, -ատոր** ածանցները, որոնք բաղադրվում են զանազան իմաստներ արտահայտող նախատիպերի վրա։ Համեմատաբար սահմափակ գործածություն ունեն **-ացի(եցի), -եալ, -եղէն, -ի՛չ, -ի, -ող, -ու** ածանցները։

Քերականական հղումներ

ած. – ածական
գոյ. – գոյական

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976։
2. Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978։
3. Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985։ Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996։
4. Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Գրաբարի դասագիրք, Ե., 2004։
5. Վ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2018։
6. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974։

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ[7]

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909։
Եզն. - Եզնկայ Կողբացւոյ՝ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։
Եղ. - Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1957։
Խոր. - Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913։
Կոր. – Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941։
Ճ. Ա. – Ճառընտիրք ազգի ազգի, ընդունարանք հին ճառից՝ բնագրաց եւ թարգմանելոց ի նախնեաց, տօնականաց, եւ ներբողականաց, եւս եւ հատուածոց մեկնութեան Սուրբ Գրոց (ըստ ՆՀԲ-ի)։
Մագ. – Գր. Մագիստրոսի «Թղթերը», Աղէքսանդրապօլ, 1910։ Տաղասացութիւնք Գր. Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868։ Գր. Մագիստրոսի

[7] Բնագրային օրինակները վերցրել ենք Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» (Երևան, 2003)։

Մեկնութիւն քերականին (տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 223-249)։

Մանդ. – Յովհաննու Մանդակունւոյ Հայոց հայրապետի Ճառք,Վենետիկ, 1860։

Մ. Ան. – Մխիթարայ Անեցւոյ Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879։

Յհ. Կթ. - Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

Նար. - Գրիգորի Նարեկայ Վանից վանականի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840։

ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836 – 1837։

Ոսկ. Եբր. - Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, Վենետիկ, 1862, հ. Բ։

Վրք. Հց. – Վարք սրբոց հարանց, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1855։

Փարպ. - Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904։

Փիլ. Յովհ. – Փիլոնի Եբրայեցւոյ Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք, Վենետիկ, 1822, Փիլոնի Յաղագս Յովնանու (էջ 578-612)։

Հոդվածում հանդիպող մնացած համառոտագրություններով բնագրային վկայությունները գործածված են հայագիտության մեջ ընդունված կարգով, ինչպես՝ Գործ. (Գործք առաքելոց*), Եբր. (Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Եբրայեցիս*), Եզեկ. (Մարգարէութիւն Եզեկիելի*), Եսթեր (Եսթեր*), Երեմ. (Մարգարէութիւն Երեմեայ*), Թուոց (Գիրք Թուոց*), Գ. Յովհ. (Թուղթ Յովհաննու առաքելոյ Գ.*), Յովբ. (Գիրք Յոբայ*)։

Ա. Հարությունյան

Ածական//գոյական արժեքներ համատեղող ածանցավոր բառերը գրաբարում

Ամփոփում

Գրաբարում գոյություն ունեն ածանցավոր ածականների խմբեր, որոնք միաժամանակ դրսևորում են ածականի և գոյականի խոսքիմասային արժեքներ։

Ածանցավոր բառերի քննությունը ցույց է տալիս, որ խոսքիմասային տարարժեքություն արտահայտող ածանցավոր բառերի մեջ գերիշխում են վերջածանցավոր կազմությունները։

* «Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 1997։

Գրաբարում որպես բառակազմական ձևույթներ ածանցավոր կազմությունների մեջ գործառապես մեծ հաճախականություն ունեն **-ական, -աւոր** ածանցները (հեթանոսական, եկեղեցական, զինուորական, աղեղնաւոր, աղանդաւոր, առաջաւոր և այլն)։ Համեմատաբար սահմանափակ գործածություն ունեն **-ացի(-եցի), -եալ, -եղէն, -իչ, -ի, -ող, -ու** ածանցները (ատտիկեցի, հեծեալ, լուսեղէն, սրբիչ, այրելի, պատմող, ձեռնածու և այլն)։

Ա. Արտյունյան

Производные слова, совмещающие значения существительных//прилагательных в грабаре

Резюме

В грабаре есть группы производных прилагательных, которые одновременно выражают семантические значения и прилагательных и существительных.

Изучение ключевых слов показывает, что в производных словах со семантическими различиями преобладают суффиксные образования.

В грабаре морфемный разбор производных слов указывает на высокую частоту применения суффиксов **-ый, -ий//-ական, -աւոր** (եկեղեցական // церковный, զինուորական // военный и т. д.).

Суффиксы **-ացի(-եցի), -եալ, -եղէն, -իչ, -ի, -ող, -ու** имеют относительно ограниченное применение.

A. Harutyunyan

Derivative words combining the meanings of nouns / adjectives in the grabar

Summary

In the grabar there are groups of adjective derivatives that simultaneously express semantic meanings of both adjectives and nouns.

The study of keywords shows that in derivative words with semantic differences, suffix formations predominate.

In the grabar, the morphemic analysis of derivative words shows the high frequency of use of the suffixes **-ական, -աւոր.**

The suffixes **-ացի (-եցի), -եալ, -եղէն, -իչ, -ի, -ող, -ու** have a relatively limited use.

Խմբագրություն է ուղարկվել 09.09.19
Հանձնարարվել է գրախոսության 19.09.19
Տպագրության է հանձնարարվել 15.10.19